

մարեցնելով իրանց տեղական պէտքերին և եկեղեցական կազմակերպութեանը՝ ներկայացնում են վեհափառ Հայրապետին ի հաստատութիւն:

100. Այս ծխական կանոնագրութեան պաշտօնական հրատարակմամբ և դործադրութեամբ դադարում են Հոգեոր բարձրագոյն, թեմական և տեղական իշխանութիւնների կողմից այս առարկայի վերաբերութեամբ տըրուած այն բոլոր թէ ընդհանուր և թէ մասնական կանոններն ու հրահանգները, որոնք չեն ստացել պետական իշխանութեան հաստատութիւնը:



**ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒԽԻ ՔԲԻՍՏՈՍԻ ԵԽ ԱՆՀԱՍԱ-  
ՑԵԼԻ ԿԱՄՈՔԸ ԱՍՏՈՒՋ ԵՎԻՍԿՈՎՈՍԱՎԵՏ ԵՎ ԿԱՔՈՒՂԻ-  
ԿՈՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈԳ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԳԳԱ-  
ԿԱՆ ՆԱԽԱՄԵԺԱՐ Ա.ԲՈՒՋ ԱՐԱՐԱՏԻԱՆ Ա.ԱՐԵԼԱԿԱՆ  
ՄԱՅ ԵԿԵՂԵԳՈՒՅ ՄԵՐՈՅ ԿԱՔՈՒՂԻԿ Էջմիածնի:**

Սիրեցեալ և պատուական ժողովրդեան մերոյ ընակելոյ ի տիրախնամք քաղաքն Տփիսիս. Հոգեշնորհ վարդապետաց, Արժանագատիւ աւագ երիցանց, Բարեկրօն քահանայից, Շնորհունակ սարկաւագաց և դպրաց, Պայծառափայլ իշխանաց, Գերազնիւ աստիճանաւորաց, Մեծապատիւ վաճառականաց, Պատուարժան հոգարարձուաց, Հաւատարիմ երեցփոխանաց, Վաստակաւոր ուսուցչաց, Յորդելի արշեսաւորաց, Քրտնաջան մշակաց, Համեստափայլ տիկնանց և օրիորդաց, Աշխատասէր երիտասարդաց, Ալեղարդ ծերունեաց և ամենայն չափու հասակի ի Քրիստոս հաւատացեալ մերապնեից. ողջոյն Յիսուսառանդ և օրհնութիւն Հայրապետական յԱթոռակալէս և Հօրն մերոյ Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչի և սէր Հայրական ի Հայոց Հայրիկէս բաղմացի ի Զեզ, առ ի կալ մնալ խաղաղ անդորր և ի Ճը-

մարիտ կենցաղ քրիստոնէական կրօնիս և յուղղափառ դաւանութիւն Ս. եկեղեցւոյս Հայաստանեայց ընդ հովանեաւ Քրիստոսահիմն Առաքելական Մայր Աթոռոյս այժմ և յաւհանեանս. Ամէն:

### Սիրեցեալ ժողովուրդ Աստուծոյ

Ե բազում դէպս և առիթս յաջողեալ է ինձ Աստուծած խօսիլ ընդ Փեղ կենդանի բարբառով զոր ինչ հարկն է և պիտանի յառօրեայ կենաց քոց, և դու մտաղիւր սիրով լուար ինձ, և ես ուրախ լինեի ընդ յառաջազիմութիւն քո օր ըստ օրէ և ընդ ջերմեանդութիւն յեկեղեցասիրութեան քում և յազգասիրութեան, տեսանելով զի ըստ ձեռնշասութեանդ ոչինչ խնայես ազգի քո. կարօտելոց, որբոց, պանդխախին, արկածելոյն, ուսումնարանի և եկեղեցւոյ սրբոյ: Օքհնեալ լիջիր զու ի Տեառնէ Աստուծոյ և օքհնեալ վաստակ քո և աշխատութիւն: Զարդիս առաւել մեծի արժանեաց քոյոց և բարեպաշտութեան հաւաստի եղաք որպատ և ջերմեո անդ զգացմանցդ ի պարախ եկեղեցասիրութեան, այն է ընդհանուր մասնակցութեան ժողովրդեանդ Տփխիս քաղաքի ի նուիրատուութիւն նորոգութեան Վանաց Առաջնորդանիստ աւագ եկեղեցւոյ տեղեոյդ, որպէս զեկոյց մեկ Գերաշնորհ Տ. Դէորդ սրբազան արքեպիսկոպոս Սուրէնեան իրրե նախագահ Յանձնաժողովոյ և նախաձեռնող նորոգութեան եկեղեցւոյդ. Եթէ «Հայրիկ» արտաքին նորոգութիւն Վանաց աւագ եկեղեցւոյ կատարեալ է կամաւոր տրովք բարեպաշտ ազգայնոց Տփխեաց, իսկ ներքին ծախս նորոգութեան յանձն տռեալ էր և հոգաց բարեպաշտօն պ. Աղեքսանդր Յովհաննիսեան Մանթաշեանց: :

Ապաքէն զի՞նչ առաւել գեղեցիկ յաշխարհիս քան զմիացեալ ոյժ ազգի միոյ և սէր համազգական ի միոյ հասարակութեան՝ և համերաշխութիւնն որ զօրացուցանէ զնա և ի մի յօդէ իրրե մի մարմին, մի սիրտ, և մի հոգի. և երանի ժողովրդեան՝ որոյ այս այսպէս է: Գիտէք ամենեքեանդ և բազումք ի Զէնջ իսկ տեսեալ կան աչօք զրազմա-

թիւ աւերակս աշխարհիս Հայոց վանօրայք, տաճարք, ամբողք, քաղաքք և այլ շինուածք, զորս բարձրացոյց ի ժամանակին միացեալ ոյժ և զօրութիւն ժողովրդեան և իշխանաց աշխարհին յերջանիկ և ի բարեբաղդ ժամանակի և մնացին նոքա շէն, կանգուն և մարդարնակ, որքան թագաւորէր ի ժողովրդեան և յիշխանս սէրն Աստուծոյ, հոգին ազգասիրութեան, միաբանութեան և համերաշխութեան: Իսկ յորժամ բարձաւ սէրն, տեղի ետ միաբանութիւն, վերացաւ հոգին ազգասիրութեան, ջլատեցաւ ոյժն և ամենայն ոք զինքենէ խոկաց և վասն իւր ապրեցաւ, ահա յայնժամ ամայացան քաղաքք, մերկացան վանօրայք, խոնարհեցան Աստուծային տաճարք, անկան ամուր բերդք և աշտարակք, դատարկեցաւ աշխարհն և անապատացաւ, աւաղ զիչը ի նոսա հոգին Աստուծոյ և ձեռն Ամենակալին որ սկաշտպանէր զնոսա:

Բազումք են եկեղեցիք և տաճարք հոյակապք ի քաղաքիդ և բաղում ծախք եղեալք են և լինին իսկ զարդիս, այլ ուր է ժողովուրդն նոցին, հաղիւ թէ յաւուրս կիւրակէից և տօնականաց Տէրունեաց քանի մի ծերունիք երեւին ի միջոյ, և ի բաղում եկեղեցեաց մի կամ երկուք են, յորս յաճախէ ժողովուրդն ի ժամ և պատարագի: Ոչ ապաքէն վեց օր գործել հրամայեաց Աստուած, իսկ եօթներորդ օր սուրբ պահել: Գէթ ի կիւրակէս և ի տօնս իւրաքանչիւր ոք եկեղեցի յաճախէր, ունկնդիր լինել աստուածային բարբառոյ և աւետարանին և արժանիս լինել շնորհաց և պատարագին. այնքան զօրացեալ է սէր մամոնային և զուարձութիւն կենցաղոյս, մինչեւ տեղի տալ երկնաւորին և հոգեւորին: Գժուարին լինի և ընդարձակ մի ըստ միոջէ զրել և բացատրել, մնաց ինձ ամփոփել զբանս իմ և ազօթել վասն քո, ժողովուրդ Հայոց: Ի մէջ վառաց տաճարիդ այդորիկ որ այժմ կանքնեալ կաս և որ նորոգեցաւ տրովք քո և օժանդակութեամբ և առատաձեռն նուիրաբերութեամբ պ. Աղեքսանդրի Յովհաննիսեան Մանթաշեանց, ուխտիր առաջի Աստուծոյ սիրել զազգն քո և զեկեղեցի, սիրել զընկերն քո իբրև զանձն քո և որ այժմ միաբան և միա-

սիրտ աղօթէք, զնոյն սէր և միաբանութիւն արտաքոյ եկեղեցւոյ ևս պահեցէք. միաբան լերուք ի գործել զբարիս, միաբան լերուք ի պահել զնախնի աւանդութիւնս ազգայինս, միաբան լերուք չմոռանալ զեկեղեցի ձեր և զկրօն, միաբան լերուք ի պահել զմայրենի լեզուն մեր և ուսուցանել զայն որդւոց ձերոց և զաւակաց, զխաղաղութիւն ունիջիք ընդ միմեանս զի և Աստուած սիրոյ և խաղաղութեան լիցի ընդ Զեզ:

Եւ մենք օրհնելով զՁեզ զամենեսեանդ յաղագս նուիրատութեան Զերոյ և օժանդակութեան նորոգութեան եկեղեցւոյդ, յայտնեմք նաև զշնորհակալիս մեր Գերապատիւ Տ. Գէորգ ա. արքեպիսկոպոսի Սուրէնեանց նախագահի, և Գերապատիւ Տեարց անդամոց յանձնաժողովոյ շինութեան, որք են՝ պարոնայք Կոստանդին Ալիխանեան, Նիկողայոս Փրիտոնեան, Եագոր Դաւիթթեան, Գէորգ Յակոբեան, Գրիգոր Բայինդուրեան, Միքայէլ Ալլամբէղեան, Յովհաննէս Թայիրեան և Խաչակ Բուղզանեան, որք ազգասիրաբար յանձն առեալք էին զգործ Հսկողութեան, որք վաստակեալք էին ի հանդանակութեան գործ. տացէ նոցա Տէր վարձո ըստ վաստակոց իւրեանց: Կացջիք, մնասջիք, ժողովուրդ պատուական, հաստատուն և յարատե ի խաղաղութեան, յանդորրութեան և ի յաջողութեան. եղիցի ողորմութիւն Ամենակալին և հովանին Բարձրելոյն ի վերայ Զեր այժմ և յաւիտեանս:

Ողջ լերուք և օրհնեալք ընդ պաշտպանութեամբ ա. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի որպէս շնորհածին զաւակք նորին այժմ և միշտ. Ամէն:

Ի վերայ խկականին սուրագրեալ և  
ՄԱՐՏԻ Կարսղիկս Ամենայն Հայոց

Գրեցաւ կոնդակս Հայրապետական  
Յամի Հնորհաց Փրկչին 1902 յ 18 յունուարի  
և ըստ Տումարիս ՌՅՇԱ.

Ի Հայրապետութեան մերում Թ. ամի.  
յԱբարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ.  
Թ. 60.

